

Սոցիալական պատմություն «ԻՄ ՄՏԵՐԻՄ ՄԱՐԴԸ ՄԱՅԱՑԵԼ Է»

Մահը բացատրելու համար սոցիալական պատմություն օգտագործելը հիանալի գործիք է աուտիզմ կամ զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների համար: Այն մահվան մասին քննարկումը սկսելու շատ պարզ և ուղղորդող միջոց է:

«Իմ մտերիմ անձնավորությունը մահացել է» սոցիալական պատմությունը կօգնի երեխաներին հասկանալ մահը: Թեև սա քննարկման համար ծանր թեմա է, սակայն այն կարևոր է բարձրացնել, քանի որ շատ երեխաներ դժվարանում են հասկանալ, թե ինչ է նշանակում մահը և պայքարում են իրենց մտերիմ մարդու կորուստը հաղթահարելու համար:




Հոգեբանները կարող են օգտագործել այս սոցիալական պատմությունը որպես ելակետ՝ ստեղծելու երեխայի սեփական եզակի պատմությունը:




Սոցիալական պատմություն «ԻՄ ՄՏԵՐԻՄ ՄԱՐԴԸ ՄԱՀԱՅԵԼ Է»

Մարդկանց մեծամասնությունը ողջ և առողջ է:



Ես ողջ եմ և առողջ:




Բայց երբեմն մարդիկ մահանում են:



Մարդիկ մահանում են հիվանդությունից, կամ դժբախտ պատահարից. կամ, երբ նրանք ծերանում են, և նրանց մարմինը դադարում է աշխատել:



Երբ մարդիկ մահանում են, նրանք չեն վերադառնում:



Մեկը, ում ես սիրում եմ, մահացել է և էլ ետ չի վերադառնալու:

մտերիմ մարդ



մահանալ



Սա ինձ դժբախտ է դարձնում, և ես կարող եմ լաց լինել: Դա նորմալ է:

տխուր



լացել



նորմալ է



Ես կարող եմ հիշել երջանիկ պահերը, որոնք ունեցել եմ իմ մտերիմ մարդու հետ:



երջանիկ պահեր

Շուտով ես ինձ լավ կզգամ և կրկին երջանիկ կլինեմ:

երջանիկ



Ես գիտեմ, որ իմ մտերիմ մարդը միշտ կսիրի ինձ, և ես միշտ կսիրեմ նրան:

մտերիմ մարդ



ինձ

